

Ա.ՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍ

ՄՈՒՐԱՏ - ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

1964, Յունիս 13. տարիներէ ի վեր ըստ ստուած թուական մը՝ մեր տարներու շրջանաւարտ աշակերտներուն հաւաքը զանազան երկիրներէ եկած, եզրայրացած Միւրաւի եւ Մուրաւ-Ռափայէլի սրբազան շունչով, այսօր իրենց կեանքի առաջին զոհողութիւններուն եւ ճիգերուն՝ առաջին պատկուծը պիտի տեսնեն:

Ուրախ են ամէնքն ալ. դաստիարակները՝ որոնք տարիներով երկրապարծի նման ցանած էին, եւ արձանագործի նման կոփած. ուրախ էին աշակերտները՝ որոնք արդիւնաբերած էին իրենց մտքին մէջ գիտութեան սերմերը, եւ իրենց սրտերը կերտած՝ ազնիւ մարդու, հայ մարդու շնորհով. ուրախ էին ծնողներ, վարդապետներ, բարեկամներ եւ նախկին սաներ, որոնք փութացած էին մասնակցելու օրուան ուրախութեան:

Պարզ էր հանդէսը, եւ կատարուեցաւ ճաշի սեղանին շուրջ, երջանիկ տրամադրութիւններով: Հնչեցին շրջանաւարտներու անունները, յաջորդ դասարաններէն առաջիններու անունները եւ բաշխուեցան նուէրներ. այս առթիւ, իրենց բարի սովորութեան համաձայն, Իտալիոյ Մուրաւ-Ռափ. նախկին աշակերտներու Միութիւնը ոսկի ժամացոյց մը նուիրեց հայերէնի ամենաքաջ աշակերտին՝ Սարգիս Մազկերտեանի, իսկ Տիար Օննիկ Մանուկեան յիսուն հազար իտ. լիրով վարձատրեց միւսին աշակերտը:

Շրջանաւարտներէն Զարեհ Տէրվիշեան կարգաց, իր ընկերներուն կողմէ, հրա-

ժեշտի ձօնը՝ ուղղուած իրենց դաստիարակներուն, իրենց ընկերներուն, եւ հայ վարժարանին՝ որուն զուրկութիւնը չըստէն կը հեռանային, նետուելու համար կեանքի ազատ ասպարէզին մէջ: Միւսին զգացումներով զեպուն, Տիգրան Մարտիկեան, իտալերէն լեզուով արտայայտուեցաւ, զոհացնելու համար իտալացի ուսուցիչները եւ հիւրերը: Յակոբ Պաղունի «Երբաք բարով» լաւագոյն մաղթանքներ ուղղեց իր մեկնող ընկերներուն, որոնք տարիներ զօրավիզ եւ օգնական եղած էին իրենց դպրոցական քայլերուն:

Նախկին սաներէն խօսք առին Բ. Մ. Խանդէկեան եւ Բ. Արամայիս Սրապեան, առաջինը Նախագահ Ի.Մ.Ռ.Ն.Ս. Միութեան, իսկ երկրորդը Նախագահ Իտալիոյ Հայոց Մշակութային Միութեան, ոգեկոչելով անմահ Հիմնադիրները վարժարանին եւ մեծանուն գէմքերը անցելի, տալով լաւագոյն խորհուրդներ իրենց ճամբայէն քալող նոր աշակերտներուն: Հուսկ, Հ. Նիկողոս Վրդ. Քէհեայեան, Տեսուչ Հայրը փակեց ընտանեկան հանգէսը, անդամ մը եւս կրկնելով իր հայրական յորդորները. «Գացէք, ըսաւ, ազգին մէջ, ինչպէս գացած են Պէշիկթաշեաններ, Վարուժաններ. եղէք ձեր բարի եւ ազնիւ վարքով՝ քարոզիչները եզրայրութեան եւ սիրոյ. այս էր Միւրաւի, այս էր Մուրաւի եւ Ռափայէլի նպատակը, եւ ասոր համար է մեր դաստիարակներուս ալ զոհողութիւնը»:

Հ. Կ. Ո.



Ա. կարգ. - Հ. Իգնատիոս Վ. Աղամեան (Մատակարար), Հ. Գաբրիէլ Վ. Լազարեան (Մեծաւոր), Հ. Նիկողոս Վ. Քէհեայեան (Տեսուչ), Հ. Կոմիտաս Վ. Ունեան (Ուսումնապետ):

Բ. կարգ. - Յովսէփ Գույումեան (Հայէպ), Տիգրան Զաւուշեան (Պէշիկթաշ), Յարութիւն Պատրիարքեան (Հայէպ), Խոսրով Սապակի (Թեհրան), Ռուբէն Սարգիսեան (Ռատ, Իրան), Լեւոն Սէյրանեան (Թեհրան), Վահէ Մումեան (Հայէպ), Տիգրան Մարտիկեան (Պրեշիա, Իտալիա), Եղուարդ Պեհեանիլեան (Ատիս Ապեպա), Զարեհ Տէրվիշեան (Հայէպ), Սարգիս Մազկերտեան (Հայէպ):

ՈՒՎՂԵԼԻ ՎՐԻՊԱԿՆԵՐ

«Բազմ.» 1964, Բ. 4-6

էջ 123, սիւն ա, տող 38րդ,	կարեն ուղղէ՝ կարկառ
էջ 123, սիւն բ, տող 10րդ,	իւր ուղղէ իւր
էջ 124, սիւն ա, տող 19րդ,	հարտարարութիւնը ուղղէ հարտարարութեանը
էջ 124, սիւն բ, տող 29րդ,	Համպեմցիկ ուղղէ Համպեմցիկի
էջ 124, սիւն բ, տող 36րդ,	Եւրոպա ուղղէ Եւրոպիա
էջ 126, սիւն ա, տող 6-7րդ,	Արտիշ ուղղէ Ատիշ
էջ 128, սիւն բ, տող 17րդ,	Սոկայ ուղղէ Սոկայ
էջ 128, սիւն բ, տող 44րդ,	Նարեկ ուղղէ Նուիրակ
էջ 128, սիւն բ, տող 47րդ,	282 ուղղէ 287
էջ 131, սիւն բ, տող 45րդ,	զոմպաշուն ուղղէ զոմպաշուն